
Greater Anatolia and the Indo-Hittite language family (Journal of Indo-European studies Monograph series, No 38, Washington D.C., 2001).

Մեծ Անատոլիան և հնդիսթական լեզվընտանիքը (Հնդեվրոպական ուսումնասիրություններ հանդեսի մենագրությունների շարք, թիվ 38 Վաշինգտոն, 2001):

Հնդեվրոպական նախալեզվի անատոլիական տեղայնացման և հարակից հարցերի վերաբերյալ այս բացառիկ հետաքրքրություն ներկայացնող հատորն ընդգրկում է 2000 թ. մարտի 18-19-ին ամերիկյան Ռիչմոնդ քաղաքում (Վիրգինիա) տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ զեկուցումներն ու քննարկումները:

Հնդիսթական վարկածն առաջ է քաշվել 1920-ականի սկզբին, Պ. Կրեչմերի կողմից, ձևավորվել 20-30-ականներին, Է. Ստարոսևսկու աշխատանքներում և 1970-ականներին վերածնունդ է ապրել Ռ. Բաուզիլի կողմից: Մինչև վերջերս այն լայն ընդունելության չի արժանացել և սովորաբար մերժվել է: Ներկայումս, տարբեր մակարդակներով՝ ամբողջությամբ, մասնակիորեն կամ գոնե անունով սկսել է արժանանալ ճանաչման:

Ընդհանուր գծերով հարցի էությունը հետևյալն է. անատոլիական լեզուները խեթերենը, լուվիերենը, ապա և լիդիերենը, լիկիերենը և կարիերենը ակնհայտորեն ազգակից են մյուս հնդեվրոպական լեզուներին, բայց և նշանակալիորեն տարբերվում են նրանցից: Սովորաբար այդ լեզուները դիտվում են հնդեվրոպական լեզվախմբի ճյուղերից մեկը: Հնդիսթական վարկածի համաձայն, անատոլիական և մյուս հնդեվրոպական լեզուների մայր լեզուն՝ նախահնդիսթերենը, սկզբից բաժանվել է երկու ճյուղի՝ անատոլիական և հնդեվրոպական: Առաջինի ժառանգներն են վկայված անատոլիական լեզուները, իսկ երկրորդը, նշանակալիորեն ավելի ուշ, դարձյալ ճյուղավորվել է, որի հետևանքով սկիզբ են առել մյուս հնդեվրոպական լեզուները: Թեև այս մոդելը, թվում է՝ շատ չի տարբերվում ավանդական հնդեվրոպական տեսությունից, բայց և այնպես, կարող է սկիզբ դնել բազում նոր մոտեցումների ու վերլուծությունների:

Հնդեվրոպական մայր լեզվի կամ, այլ կերպ ասած, հնդեվրոպական «նախահայրենիքի» տեղայնացման առաջին փորձն այն կապել է Արարատ լեռան հյուսիսային լանջերի հետ (ըստ Աստվածաշնչյան ավանդության): XX դ. հին հնդեվրոպացիների անատոլիական ծագման տեսակետն առաջին անգամ գիտական մակարդակով առաջադրվել է 1973-ին, անգլիացի հնագետ Ք. Ռենֆրյուի մի հոդվածում: Խորհրդային գիտնականներ Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովն իրենց հիմնարար աշխատության մեջ¹, հիմնականում լեզվական տվյալների հիման վրա, տեղայնացնում են այդ «նախահայրենիքը» Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում: 1987-ին հրատարակվում է Ք. Ռենֆրյուի գիրքը, որտեղ, արդեն

¹ *Гамкредидзе Т. В., Иванов В. В., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984. Աշխատությունը հրատարակվել է նաև անգլերեն՝ Gamkrelidze T., Ivanov V., Indo-European and Indo-Europeans. Berlin, New York, 1995.*

հիմնականում հնագիտական մոտեցման հիման վրա, «նախահայրենիքը» տեղայնացվում է հարավ-կենտրոնական Անատոլիայում (Չաթալ-Հյույուք): Պետք է նշել, որ թեև նման տեսակետներ արտահայտել են նաև որոշ այլ գիտնականներ, բայց դրանք մինչև հիմա էլ լայն ընդունելություն չունեն մասնագետների շրջանում:

Այս գիտաժողովն առաջին փորձն է՝ լեզվաբանների ու հնագետների միացյալ ուժերով վերլուծելու խնդիրը, բայց նույնիսկ այստեղ էլ «նախահայրենիքի» անատոլիական տեղայնացման տեսակետները միարժեք ընդունելություն չեն գտնում: Ընդ որում, այստեղ, «Մեծ Անատոլիա» ասելով, ի նկատի են առնվում բուն Անատոլիան և Հայկական լեռնաշխարհը՝ Էգեյան ծովից մինչև Կասպից ծով:

Գրքի առաջին հոդվածն է՝ Է. Բարբեր, «Բանալին հագուստի մեջ է»: Քննելով հագուստի հնագիտական մնացորդները, բրդատու ոչխարի և քոչվորական ոչխարաբուծության ի հայտ գալու ժամանակաշրջանը և հնդեվրոպական համապատասխան տերմինները՝ հեղինակը գտնում է, որ հնդեվրոպացիների «նախահայրենիքը» կարող է տեղայնացվել «Կովկաս-սիայում» (ի նկատի ունի Հյուսիսային Կովկասն ու Անդրկովկասը):

Ամերիկացի ուրարտագետ Փ. Զիմանսկու հոդվածը վերնագրված է՝ «Հնագիտական քննություններ Ուրարտուի էթնոլեզվաբանական բազմազանության վերաբերյալ»: Ըստ հնագիտական տվյալների, Ուրարտուի ձևավորումից անմիջապես առաջ, հատկապես նրա կենտրոն Վանի շրջանում և մերձակայքում, քիչ թե շատ նշանակալի նստակյաց բնակչություն չի եղել: Եղած հնագիտական նյութը «կովկասյան» կապեր է դրսևորում (խոսքը վերաբերում է ներկայիս Հայաստանի Հանրապետության և հարակից տարածքներին): Իսկ ուրարտական դարաշրջանի հարուստ և բազմազան տվյալները ցույց են տալիս, որ թագավորության արմատները կապված են հարավի՝ Ռեանդուզի շրջանի և հին Խուբուշկիա երկրի հետ: Ուրարտական գիրը, պետական կրոնը և պետության մյուս ատրիբուտները ստեղծվել են, ամենայն հավանականությամբ, չափազանց փոքրաթիվ մարդկանց կողմից, սահմանափակ ժամանակահատվածում: Զիմանսկին, ըստ այդմ, անում է մի վերին աստիճանի հետաքրքիր համեմատություն. որպես շատ փոքրաքանակ վերնախավի կողմից ստեղծված մեծ պետության տիպար, բերվում է ինկերի կայսրության օրինակը: Այսինքն հնավայրի (Վանից քիչ հյուսիս), որի պեղումների մասնակիցն է հեղինակը, տաճարի արձանագրության համաձայն, Ռուսա II արքան այդտեղ իր կառուցած քաղաքի բնակչությունը բերել է իր թագավորության, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերից, որը երևում է նաև քաղաքի տարբեր թաղամասերի հնագիտական նյութերի տարբերությամբ: Ուրարտուի կարճաժամկետ գոյության հիման վրա եզրակացություններ են արվում Անատոլիայում հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական բնակչության, լեզուների փոփոխության ու պետությունների ձևավորման վերաբերյալ:

Փ. Քյունիհոլմի հոդվածի («Դենդրոժամանակագրական հեռանկարներ Մեծ Անատոլիայի և հնդիսթական լեզվընտանիքի վերաբերյալ») նյութը հնդիսթական լեզուների ձևավորման ժամանակագրությունն է: Այստեղ մասնավորապես հետաքրքիր է, որ Անատոլիայում արդեն նոր քարե դարում ի հայտ են գալիս

հսկայական թվով բնակավայրեր, անհամեմատելի՝ աշխարհի այլ շրջանների հետ: Ընդ որում, նրանցից շատերի հնությունը մինչև վերջերս ուղղակի անհավանական կրթվար՝ Ուրֆայի շրջանում, այսինքն, Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում ի հայտ են գալիս մ.թ.ա. XI-IX հազարամյակների բնակավայրեր:

Ք. Ռենֆրյուն «Նախահնդեվրոպական լեզվի անատոլիական ծագումը» հոդվածում ներկայացնում է իր տեսության որոշ դրույթներ: Նախ, մերժվում է «հեծյալ քոչվոր հնդեվրոպացու» դասական կերպարը: Ըստ նորագույն տվյալների, հեծյալ ռազմիկն ի հայտ է գալիս միայն մ.թ.ա. II հազարամյակի վերջում, երբ հնդեվրոպական հիմնական լեզուներն արդեն վաղուց անջատվել էին իրարից: Ապա, Արևմտյան Անատոլիայի հին բնակչության, որին բնորոշ էին որոշ «մայրիշխանական» հատկանիշներ, հնդեվրոպական (անատոլիական) ծագման բացահայտումը մերժում է մեկ այլ դասական պատկերացում՝ հին հնդեվրոպական «հայրիշխանական» ընտանիքի մասին: Ընդհանրապես, եթե անատոլիական լեզուները հայտնաբերված լինեին մինչև հնդեվրոպական տեսության ձևավորումը, ապա «նախահայրենիքի» հավանական թեկնածուն պիտի լիներ հենց Անատոլիան: Բերվում են հնդիսթական լեզուների խմբավորման մի քանի մոդել, որոնք պետք է ծագեին հարավ-կենտրոնական Անատոլիայից, շուրջ մ.թ.ա. 7000 թ. և խաղաղ ճանապարհով դանդաղ տարածվեին աշխարհում՝ իրենց հետ տարածելով երկրագործությունը: Շեշտվում է իսթական պետության տեղաբնիկ ծագման հանգամանքը: Հնդեվրոպական հիմնախնդրի համար կարևոր են համարվում և քննարկվում են ոչ միայն լեզվաբանական ու հնագիտական, այլև մոլեկուլային ծագումնաբանության տվյալները:

Ս. Ֆինկելբերգի հոդվածը («Գծային Ա. լեզուն. հունարե՞ն, սեմակա՞ն, թե՞ անատոլիական») նվիրված է հին Կրետեի մինչ այժմ չվերծանված գրության լեզվի ծագումնաբանական կապերի բացահայտմանը: Քննարկման ընթացքում մեկ առ մեկ բացառելով անհավանական տեսակետները՝ հեղինակը հանգում է այն մտքին, որ այդ լեզուն պետք է լիներ անատոլիական, ազգակից՝ լիկիերենին: Եվ հատկանշական է, որ Հերոդոտոսը կրետական ծագում է վերագրում լիկիացիներին:

Ա. Լերմանն իր հոդվածում («Նախահնդիսթերենի վերականգնումը») անատոլիական և մյուս հնդեվրոպական լեզուների համապատասխանությունների ու անհամապատասխանությունների, հնաբանությունների ու նորաբանությունների քննարկման հիման վրա դիտարկում է միասնական նախալեզվի վերականգնման խնդիրը:

Վ. Իվանովը քննարկում է անատոլիական լեզուների ազգակցության և ժամանակագրության խնդիրները («Հարավային անատոլիականը և հյուսիսային անատոլիականը, որպես առանձին հնդեվրոպական լեզուներ և անատոլիականը, իբրև ուշ լեզվաբանական շրջան»): Բերվող 100 և 200 բառանոց գլոտոժամանակագրական ցուցակների հիման վրա ցույց է տրվում, որ խեթերենն ու լուվիերենն իրար մերձավոր ազգակից չեն և իրենց ընդհանուր հատկանիշները կարող էին ձեռք բերել միևնույն տարածքներում տեղայնացած լինելու հետևանքով: Ըստ հեղինակի, անատոլիական լեզուները պետք է դիտվեն հնդեվրոպական

լեզուների շարքում, և հնդիսթականի ձևակերպման կարիք չկա: Չափազանց հետաքրքիր է Բ. Դարդենի հոդվածը («Հնդիսթերենի անատոլիական ծագման հարցի շուրջ»): Հեղինակը ցույց է տալիս, որ լեզվախմբի ծագման խնդրում էական են միայն մշակութային իմաստ կրող բառերը, իսկ ասենք՝ ծառերի, ձկների անվանումները, որոնց հիման վրա ժամանակին դատողություններ են արվել, հեշտությամբ իմաստափոխվում են և չեն կարող «նախահայրենիքի» տեղայնացման հիմք ծառայել: Հեղինակը քննարկում է ընդամենը մի քանի եզր՝ «բուրդ», «ձի», «լուծ» և այլն, և կարծում է, որ հնդիսթական հասարակությունն ունեցել է, ասենք, ձի, բրդոտ ոչխար և այլն, և չի ունեցել անիվ, որն ի հայտ է եկել անատոլիական լեզուների առանձնաանալուց հետո: Հեղինակը թեև լեզվաբան է, բայց հատկապես հնագիտական նյութի հիման վրա մանրամասն քննարկում է, թե որտեղ և երբ կարելի է տեղայնացնել և ժամանակագրել այդ մշակութային հատկանիշներով բնորոշվող հասարակությունները: Ըստ նրա, հնդիսթականի հավանական ժամանակաշրջանն է մ.թ.ա. V-IV հազարամյակները, իսկ աշխարհագրորեն՝ պոնտկասպյան տափաստանն ու Կովկասի հարավը:

Գիտաժողովը եզրափակում է կազմակերպիչը՝ Ռ. Դրյուսը, որը նաև գրքի խմբագիրն է («Մեծ Անատոլիա. նախաանատոլիականը, նախահնդիսթականը և անդին»): Ըստ հեղինակի, թեև չեն բացառվում նախալեզվի արևելաանատոլիական (Հայկական լեռնաշխարհի), ապա և հարավ-կովկասյան ու պոնտկասպյան տեղայնացումները, բայց և այնպես առավել հավանական սկզբնական «նախահայրենիքն» է նորքարեդարյան Անատոլիան:

Հաշվի առնելով «ձի» տերմինի համահնդեվրոպական բնույթը և ձիու մեծ դերը պատմությանը հայտնի հնդեվրոպական վաղ հասարակություններում՝ գրքի վերջում ներկայացված է Ջ. Սամերսի հավելվածը Անատոլիայում նորքարեդարյան, պղնձեքարեդարյան և վաղբրոնզեդարյան դարաշրջանների ձիու ոսկրային մնացորդների վերաբերյալ: Ըստ հեղինակի, թեև վայրի ձին հայտնի է Անատոլիայում արդեն նոր քարե դարից, բայց այն ընտանեցվել է, հավանաբար, ոչ այնտեղ: Ինչևէ, Կենտրոնական և Արևելյան Անատոլիայի նորքարեդարյան և պղնձեքարեդարյան բնակիչներն իրենց լեզուներում պետք է որ ունենային «ձի» տերմինը: Թերևս հետաքրքիր է նշել, որ ուկրաինական Դերենկա հնավայրի ձիու մնացորդները, որոնք շատ հաճախ քննարկվել են վաղ հնդեվրոպական համատեքստում, ներկայումս վերաթվագրվում են մ.թ.ա. I հազարամյակով, այսինքն՝ շատ ուշ շրջանի են:

Հայերենը «Մեծ Անատոլիայի» միակ հին լեզուն է, որ պահպանվել է մինչև այսօր: Ուղղակի ակնհայտ է, որ հայերենի և հայկական մշակույթի տվյալների հատուկ քննությունը նույնպես կարող էր կարևոր նյութ տրամադրել այս գիտաժողովին: Ցավոք, հայկական նյութ և հայագիտական հարցեր համարյա չեն քննարկվում: Ափսոսանքով պետք է նշել նաև հայագիտության համապատասխան ասպարեզի մասնագետների պակասը կամ բացակայությունը և՛ մեզանում, և՛ արևմուտքում: Ստորև արժե մի քանի խոսքով անդրադառնալ գրքի՝ հայագիտության և ուրարտագիտության համար հետաքրքրություն ներկայացնող

որոշ հատվածների՝ ոչ ծավալուն մեկնաբանություններով՝ նշելով, որ այդ հատվածների մի մասը տեղի ունեցած տպավորություն է թողնում:

Պ. Զիմանսկին, ինչպես ասվեց, շեշտում է Ուրարտուի վերնախավի չափազանց փոքրաթվությունը, ապա և ուրարտական տեքստերում բուն «ուրարտացիների» մի տեսակ չգոյությունը: Ընդ որում, արքայանուններից մեկը (Ռուսա) ակնհայտորեն ուրարտերեն չէ: Հիշելով Ռուսա II-ի կողմից ծայրամասային բնակչության վերաբնակեցումը Վանի շրջանում՝ նա կասկածի է ենթարկում Ի. Դյակոնովի այն պնդումը, որ հայերը չէին կարող Հայկական լեռնաշխարհ ներթափանցել հզոր Ուրարտուի գոյության դարաշրջանում, այլ պետք է որ այդտեղ հաստատված լինեին ավելի վաղ: Ըստ նրա, Ռուսայի բերած նոր վերաբնակիչների մեջ պետք է լինեին և հայերը: Հեղինակը թերևս ծանոթ չէ Դյակոնովի հատուկ անդրադարձին ուրարտական արքաների վերաբնակեցման քաղաքականությանը²: Նա նշում է Գ. Ջահուկյանի անգլերեն մի հոդվածը Անատոլիայում հայերի հին ներկայության վերաբերյալ³, բայց չի հիշում նույն հեղինակի և Դյակոնովի՝ իր հոդվածի նյութին շատ ավելի առնչվող աշխատությունները (հրատարակված անգլերեն, ԱՄՆ-ում), որտեղ լեզվական քննության հիման վրա հիմնավորվում է հայերի վաղ ներկայությունը Ուրարտում⁴:

Հետաքրքիր է նշել, որ քննարկման ընթացքում, հենվելով նաև Զիմանսկու հեղինակության վրա՝ «ուրարտացիներ» և «ուրարտերեն» տերմիններն օգտագործվում են չակերտներում՝ ակնարկելով դրանց ոչ ճշգրիտ լինելը (մեկը ենթադրում է պետության փոքրաքանակ վերնախավը, իսկ մյուսը՝ գրավոր արձանագրությունների լեզուն, որոնք չեն կարող տարածվել պետության ողջ բնակչության վրա): Սա որոշակիորեն տարբերվում է խորհրդային դպրոցի մոտեցումից, որի համաձայն, Ուրարտուի բնակչությունը նշանակալիորեն բաղկացած էր հենց բուն «ուրարտացիներից» ու ազգակից ցեղերից:

Իր հոդվածում Զիմանսկին մեջբերում է մի հատված Ա. Ռեդգեյթի հայոց պատմության տեսությունից. «Ժամանակագրության (հայերի՝ Հայկական լեռնաշխարհ անցնելու -Պ.Ա.) հարցը կարևոր է, քանի որ դրանից է կախված ուրարտական պատմության նկատմամբ վերաբերմունքի հիմնավորումը՝ որպես Հայաստանի պատմության մի նշանակալի մաս, թե միայն նրա նախնական հետնախորշ: Արդյո՞ք հայերը մ.թ.ա. վեցերորդ դարում համեմատաբար նախնական մի ժողովուրդ էին, առնետներ, որոնք մ.թ.ա. յոթերորդ դարում լքեցին կարճամյա Փոյուզական կայսրության խորտակվող նավը ամուր հողի հասնելու համար, թե՞

² *Дьяконов И. М., Типы этнических передвижений в ранней древности (Древний Восток N 4. E., 1983, с. 5-23).*

³ *Djahukian G.B., Did the Armenians Live in Asia Anterior before the Twelfth Century BC? In: When the World Collide. An Arbor, 1990, p. 25-31.*

⁴ *Djahukian G.B., Armenian Words and Proper Names in Urartian Inscriptions. In: Proceedings of Fourth International Conference on Armenian Linguistics. Delmar, New York, 1992, p. 49-59. Diakonoff I.M., First Evidence of the Proto-Armenian Language in Eastern Anatolia. Annual of Armenian Linguistics, 1992. Vol. 13, p. 51-54.*

նրանք մի առաջադիմած ժողովուրդ էին, որ մասնակցություն էր ունեցել նոր կործանված Ուրարտական կայսրության մշակույթում⁵»:

Բազմաթիվ ժողովուրդներ իրենց պատմական հայրենիքներն են հասել մ.թ.ա. վեցերորդ դարից ուշ, մշակութային ոչ ամենակատարյալ զարգացման աստիճանի վրա, տարբեր պատճառներով տեղի ունեցած գաղթերի հետևանքով: Բայց որքանով է պատշաճ առնետների հետ համեմատությունը, որպեսզի հղվի նաև մեկ այլ գիտական հոդվածում: Ընդ որում, եթե խորհրդային և հայկական գիտության մեջ հիմնավորվել և ընդունվել են հայերեն լեզվի՝ Հայկական լեռնաշարհում Ուրարտուի կազմավորումից առաջ խոսվելու և Ուրարտուի պատմության՝ հայոց պատմության մի անբաժանելի հատվածը լինելու դրույթները⁶, ապա Արևմուտքում դեռևս շատերի կողմից ընդունվում են հայերի ուշ ներգաղթի և Ուրարտուի ու Հայաստանի պատմություններն իրարից խստորեն բաժանող տեսակետները⁷:

Ռ. Դրյունսն իր եզրափակիչ ելույթում նշում է, որ, թեև ըստ Զիմանսկու, հայերենն է Ուրարտու բերվել մ.թ.ա. 850-650 թ. ընթացքում, բայց նրա քննության՝ թերևս ավելի հավանական եզրակացությունը պիտի լինի այն, որ հենց այդպես կոչված «ուրարտերենն» է բերվել այդ ընթացքում Արաքսի հովիտ: Հեղինակը հարց է բարձրացնում, թե արդյոք ուրարտերենի «անմշակությունը» (բանաձևային բնույթը) չի՞ մատնաշում, որ այն չի եղել արքաների ու գրիչների մայրենի լեզուն: Արդյոք ուրարտերենն այն նորամուծություններից չէ՞, որ իրենց հետ հարավից բերեցին Սարգուրի I-ը և նրա հաջորդները: Քանի որ պարզ չէ «ուրարտերենի» բնիկությունը, հնարավոր է, որ հայերենի արմատներն այս շրջանում շատ ավելի հին են, քան Վանի մեծ թագավորությունը:

Վ. Իվանովը մ.թ.ա. II հազարամյակում հայերենը տեղայնացնում է Հայկական լեռնաշխարհում, հատկապես Վանա լճից հյուսիս: Նա միակ մասնագետն է, որ գիտաժողովի ընթացքում փորձում է բարձրացնել հայերենի՝ Հայկական լեռնաշխարհում հին արմատներ ունենալու հարցը: Նա նշում է, որ վաղուց արդեն Գ. Ղափանցյանը և որոշ այլ հայ հեղինակներ բացահայտել են հայերենում խեթական փոխառություններ, որոնք վկայում են հայ-խեթական շփումների, և այսպիսով, հայերենի՝ մ.թ.ա. II հազարամյակում Անատոլիայում խոսվելու մասին: Ցավոք, դրանք տպվել են միայն հայերեն և ռուսերեն և պատշաճ ուշադրության չեն արժանացել Արևմուտքում: Սևանա լճի ձուլը կոչվում է *Խշխան*, որը պետք է որ խեթական փոխառություն լինի: Հատկանշական է արդեն Ի. Գելբի հրատարակած մի՝ մ.թ.ա. III-II հազարամյակների սահմանի հին աղյուսակում Haya ցեղանվան գոյությունը: Կան նաև այլ տարբեր պատճառներ կարծելու, որ հայերենը խոսվել է

⁵ Redgate A.E., *The Armenians*, Oxford, 1999, p. 14.

⁶ Այս հարցերը մանրամասն քննվում են, օրինակ, Բ. Դյակոնովի՝ *հայոց նախապատմության վերաբերյալ մենագրության մեջ* (Дьяконов И. М., *Предыстория армянского народа*, E., 1968, с. 203-204, 241-243), տե՛ս և վերևում, 2 և 3 ծանոթագրությունների, ապա և այլ ռուս և հայ հեղինակների աշխատություններում:

⁷ Այդ թվում և վերջերս ՄՄՆ-ում արևմտյան հայագետների կողմից ստեղծված *հայոց պատմության երկհատորյակում* (The Armenian People from Ancient to Modern Times. Ed. by R. Hovannisian, New York, 1997):

Անատոլիայում կամ հենց Արևելյան Անատոլիայում (Հայկական լեռնաշխարհում) մ.թ.ա. II հազարամյակից: Քննարկման ընթացքում հիշվում է նաև խեթական աղբյուրների Hayasa թագավորությունը: Ստորև բերվում է մի հատված Իվանովի և ամերիկյան լեզվաբան, ԱՄՆ-ում հայերենագիտական հանդեսի բազմամյա խմբագիր Ջ. Գրեպինի բանավեճից:

Գրեպին-Իշխան բառը (...) առավել քան հավանական է, որ պարսկական փոխառություն լինի (...): Ինչ վերաբերում է Հայասային (հայ ցեղանվան առնչությամբ-Պ.Ա.), ապա այդ ստուգաբանությունը անչափ, անչափ թույլ է (terribly, terribly weak), քանի որ միջձայնավորային *y*-ն չէր կարող պահպանվել հայերենում: Ուղղակի, ձայնաբանորեն, այն (հայ ցեղանունը-Պ.Ա.) կարող էր կապվել Hatti-ի հետ (խեթական պետության անվանումն է -Պ.Ա.), որտեղ միջձայնավորային *t*-ն գեղեցիկ կերպով դառնում է *y*:

Իվանով - Ես խոսում եմ Haya-ի մասին, որտեղ չկա *-s*- (խոսքը Հայասայի մասին է- Պ.Ա.): Չկան ձայնաբանական հիմքեր բացատրելու համար, թե ինչու պիտի այդ Hatti-ն դառնար Haya: Այս հարցի վերաբերյալ ընդարձակ գրականություն կա⁸:

Գրեպինի խոսքի առնչությամբ պետք է նշել, որ հայոց ազգաձագման հայասական տեսակետի կողմնակիցների՝ Ղափանցյանի, Երեմյանի, Ջահուկյանի, Պիոտրովսկու, Իվանովի և այլոց կարծիքները բոլորովին էլ «անչափ թույլ» չեն, և ինչպե՞ս կարող է լեզվաբանորեն այդպիսին համարվել հայերենի պատմության լավագույն գիտակ Գ. Ջահուկյանի կարծիքը: Ի՞նչ կապ ունի միջձայնավորային *y*-ի մասին ասվածը հայ ցեղանվան դեպքում (ծագած, հավանաբար, ավելի հին **hայn*-ձևից), երբ խոսվում է բառավերջի *y*-ի մասին, որը, նախ, հավելում է ա-ով վերջացող հայերեն բառերում (օրինակ, *ընծայ*, *ծառայ* և այլն, հմմտ. և համանման միավանկ ցեղատեղանունները՝ *Տայք*, սեռ. հոգն. *Տայոց*, ապա և *Վայոց ձոր*) և կարող է նաև հնդեվրոպական **yo-/yā* ածանցի հետքը լինել: Միայն զարմանալ կարելի է, թե ինչու՞ են ամերիկյան որոշ հայագետներ այդպես կրքոտ պաշտպանում *հայ* ցեղանվան ծագման ենսեն-դյակոնովյան տեսակետը, որը հաշվի չի առնում, օրինակ, այնպիսի ուժեղ փաստարկներ, ինչպիսիք են հայոց նախնիների սկզբնական տեղանյացումը (ըստ հունական լեգենդի) և հայ նախաքրիստոնեական աստվածների հիմնական պաշտամունքների կենտրոնացվածությունը նախկին Հայասայի տարածքում: Ընդ որում, հենց Գրեպինն՝ ինքը հայերի ծագման դյակոնովյան վարկածի կողմնակիցը չէ: Հիշատակության արժանի է նաև, որ ըստ Գրեպինի, հայ-անատոլիական համապատասխանությունների դեպքում, երբ խեթերեն *h*-ն համապատասխանում է

⁸ *Իվանովն այստեղ պաշտպանում է իր տեսակետը, որն արտահայտել է մի շարք աշխատություններում՝* **Иванов В. В.**, *Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну*. (ՊԲՀ, 1983, N 4, էջ 30-33). **Նույնի՝** *Первоначальная глубинная структура текста гимна Ва(х)агну и проблемы армянской этимологии. Международный симпозиум по армянскому языкознанию, Е., 1984, с. 67, 82-83, прим. 34.* **Նույնի՝** *О взаимодействии индоевропейских и северокавказских диалектов в ареале Армянского Нагорья ок. III-I тыс. до н.э. Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского Нагорья и сопредельных областей, Е., 1990, с. 187; Гамкрелидзе Т. В., Иванов В. В., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с. 913.*

հայերեն խ-ին, ապա հայերեն բառը փոխառված է խեթերենից, իսկ երբ հ-ին, ապա բառը հայերենում բնիկ է⁹: Ըստ այդմ, *հայ* ցեղանվան ստուգաբանությունները, կապված և՛ *Hayasa*-ի (Խայա-սա), և՛ *Hatti*-ի (Խաթի) հետ, պետք է որոշակի ճշգրտվեն: Պետք է նշել, որ թեև վերևում խոսվեց *հայ* ցեղանվան հայասական առնչության հիմնավորվածության մասին, բայց, իհարկե, անհնար է առանց էական փաստարկների բացառել նաև *հայ* < *Hatti* ստուգաբանությունը:

Ինչ վերաբերում է *իշխան* բառին, հայտնի է, որ իշխանության տերմինները հայերենում հիմնականում իրանական են, բայց կան նաև ակնհայտ ոչ իրանական բառեր, հմմտ. հատկապես *արքա*, *արքունիք* (արխաիկ, թերևս ուրարտական վերջածանցով, որն ակնարկում է բառի հնությունը), հունարեն և փյոյոգերեն, ոչ լրիվ պարզ ծագման, զուգահեռներով: Հեղինակավոր ուսումնասիրություններում (օրինակ, Աճառյանի, Ղափանցյանի, Ջահուկյանի, Պուխվելի, Գրեպինի աշխատություններում) առավել հավանական է համարվել *իշխել* և *իշխան* բառերի իրանական ծագումը, բայց միշտ նշվել է նաև նրանց հնարավոր կապը նույնահունչ և նույնիմաստ խեթական արմատի հետ: Վերջին մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ այդ բառերն, ամենայն հավանականությամբ, անատոլիական փոխառություններ են¹⁰: Ըստ մի կարծիքի՝ Սևանա լճի, ինչպես և Սյունիք (Սինիք / Մենիք) նահանգի անվանումներն անատոլիական են, ազգակից՝ խեթերեն *šiu-* (կարդա *uḫnu-*) «աստված» (հնում՝ «երկնքի, արևի աստված») տերմինին, որից բխեցվում է և ուրարտական արևի աստծու *Šuini* անունը (հմմտ. նույն շրջանի Արնիս, Արնիք, Արեգունի տեղանունները և խեթական ու հայկական առասպելները արևի ու ծովի կամ մեծ լճի կապի մասին)¹¹: Ըստ այդմ, իրոք որ հնարավոր է և՛ Սևանի, և՛ Սևանա լճի էնդեմիկ ձկան անվանումների անատոլիական՝ խեթերենին մոտ, լուվիերենից շատ տարբեր ծագումը: Սա, թերևս, այն օրինակներից մեկն է, որը ցույց է տալիս, որ հայերենի տվյալները կարող են էական լինել նաև անատոլիական ցեղերի տարածման հարցերի քննարկման ժամանակ:

Ինչևէ, այս գիրքը հրաշալի օրինակ է, թե ինչպես կարելի է պաշտպանել եղած գիտական կարծիքները, կամ ընդհակառակը, հրաժարվել հեղինակավոր պատկերացումներից, անկաշկանդ ներկայացնել նոր կարծիքներ ու փաստարկներ և սահմանել նոր մոտեցումներ: Իհարկե, բոլոր գիտնականներն էլ մնում են իրենց կարծիքներին, բայց և այնպես, կարելի է ասել, որ մի կարևոր քայլ է արվել, և մենք ավելի ենք մոտեցել հիմնախնդրի լուծմանը: Առաջ են գալիս և նոր մոտեցումներ՝ կապված, օրինակ, հագուստի հնագիտության, մոլեկուլային գենետիկայի, ապա և հենց լեզվաբանական և հնագիտական նյութերի համադրման հետ: Հիշատակության

⁹ *Greppin J., Kurilovicz and Hittite h, and further extensions on to Armenian. In: Analecta Indoeuropea Cracoviensis, II: Kurilovicz memorial volume, Part 1. Cracov, p. 313-315.*

¹⁰ *Հովաննիսյան Լ. Շ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 224-225:*

¹¹ *Петросян А. Е., Отражение индоевропейского корня в армянской традиции (Լրաբեր հաւարական գիտությունների, 1987, N1, էջ 67-68), նույնի՝ Самоназвание армян и вопрос локализации носителей протоармянского языка (Լրաբեր հաւարական գիտությունների, 1991, N 5, էջ 127-128).*

արժանի է, որ հնագետ Ք. Ռենֆրյուն, թեև լիովին չի ընդունում լեզվաբան Դարդենի քննության եզրակացությունները և որոշ թերություններ է մատնանշում, բայց և այնպես արդյունավետ և դրական է գնահատում նրա հնագիտական վերլուծությունը և նոր մոտեցումը հարցին:

Ե՛վ գիտաժողովը, և՛ այս գիրքն, անշուշտ, գերծ չեն թերու-թյուններից: Քննարկվող թեմաները և ելույթ ունեցողների կազմը կարող էին ավելի լայն լինել: Ինչպես և նշում են քննարկման մասնակիցները, փաստորեն չեն հիշվում հնդեվրոպաբանության այնպիսի կարևոր և մշակված ճյուղեր, ինչպիսիք են առասպելաբանությունը և անվանա-բանությունը: Բայց և այնպես, թերությունները չեն արժեզրկում գիրքը, որը պետք է գնահատվի որպես մի կարևոր ներդրում գիտության մեջ:

MALLORY J.P., ADAMS, D.Q., *Encyclopedia of Indo-European culture*, London, Chicago, 1997.

ՄԵԼՈՐԻ Զ. Փ., ՄԴԱՄՄ Դ. Բ., *Հնդեվրոպական մշակույթի հանրագիտարան*, Լոնդոն, Չիկագո, 1997:

Այս գրախոսության ուշացածությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի ամերիկյան համալսարանի գրադարանի կողմից գիրքը միայն վերջերս է ձեռք բերվել:

Քննարկվող հսկայական հատորը հնդեվրոպական մշակույթի տեղեկատու-հանրագիտարան ստեղծելու առաջին փորձն է, և, ինչպես լինում է նման դեպքերում, գերծ չէ թերություններից: Երկու խմբագիր-համահեղինակները, ապա նաև որոշ այլ մասնագետներ, ներկայացնում են հոդվածներ հնդեվրոպական լեզվաբանության, հնագիտության, ազգագրության, առասպելաբանության համարյա բոլոր կարևոր թեմաների վերաբերյալ: Նկարագրվում ու բնութագրվում են հնդեվրոպական լեզու-ները, հնագիտական մշակույթները, տարբեր երևույթների անվանումները, առասպելույթները (օրինակ, կան բառ-հոդվածներ «հայերեն», «իլիրիերեն», «կոմարովյան մշակույթ», «կուր-արաքսյան մշակույթ», «սիրտ», «քամի», «զինվորներ», «ձի», «ձիու աստվածուհի», «աստվածային երկվորյակներ», «կրակը ջրի մեջ» և այլն): Ներկայացված են Յ. Պոկոռնու բառարանի համարյա բոլոր հնդեվրոպական արմատները՝ դասավորված ըստ իմաստների: Առաջին խմբագիր-հեղինակը հնագետ է, հնդեվրոպաբանության վերաբերյալ պահպանողական հայացքների հայտնի կողմնակից, երկրորդը՝ լեզվաբան: Որոշ բառ-հոդվածներ գրվել են նրանց կողմից, երբ ավելի ճիշտ կլիներ դրանք հանձնարարել մասնագետ հեղինակներին: Ցավալիորեն սխալաշատ է հայկական նյութը: Ստորև բերվում են հաստատվածներ Զ. Գրեպինի քննական տեսությունից¹²:

Հայկական բառ-հոդվածներն ունեն բազում խնդիրներ, որոնցից ոչ մեկն աղետալի չէ, բայց որոնք, ամբողջության մեջ, զգուշավորություն կառաջացնեն կարդացողների մի մասի մեջ: (Ասվում է, որ - Պ.Ա.) Հայերենն ունի գրականություն

¹² *Greppin, J., Booknote, Annual of Armenian linguistics. Vol. 18, 1997, p. 82.*

(էջ 302)՝ վերագրված հինգերորդ դարին, «Բայց առավել հավանականությամբ իններորդ դարից սկսվող»¹³ (...) Եվ ես կարծում եմ, որ հայերի ծագման խնդրում ավելորդ շեշտ է դրված փոյուզացիների և նրանց կատարած դերի վրա՝ մեծավ մասամբ անհարկի անքննադատ մոտեցմամբ գաղափարներ վերցնելով Դյակոնովից: Ի վերջո, աղադակող մի սխալ է ի հայտ գալիս բառացանկում, ուր հայերեն բառարանը սխալ կերպով ներկայացված է ըստ ժամանակագրական ծագման... (մեկ բառ է միայն ներկայացված որպես հին հայերեն, երկուսը՝ որպես միջին հայերեն, իսկ ավելի քան տասներկու սյունակ գրաբար բառերը՝ **աւձիք, առոզանէմ** և այլն, ներկայացված են իբրև նոր հայերեն -Պ.Ա.):

Կան նաև բազմաթիվ այլ վրիպումներ, սխալներ ու վիճելի դրույթներ (օրինակ, Անդրկովկասի միջինբրոնզեդարյան մշակույթները, չնայած իրենց ակնհայտ հնդեվրոպական զուգահեռներին, ըստ ավանդական տեսակետի, համարվում են ոչ հնդեվրոպական. թեև շատ լավ ներկայացված են հնդեվրոպական առասպելաբանության դյումեզիլյան դպրոցի վերակազմությունները, բայց բացակայում են խորհրդային մասնագետների վերականգնած և քննարկած առասպելությունները):

Այսքան խոսվեց թերությունների մասին՝ շեշտելու համար, որ այս գիրքն օգտագործելիս պետք է հանդես բերել որոշակի զգուշավորություն և քննական վերաբերմունք: Բայց գրքի արժեքն անուրանալի է: Չնայած բացթողումներին ու սխալներին՝ բերված ահռելի, Հայաստանում մեծապես անհայտ ինֆորմացիան կարող է օգտագործվել և Արևմուտքում արդեն լայնորեն օգտագործվում է գիտական գրականության մեջ:

¹³ Այս արտառոց սխալի մեղքն, անշուշտ, հեղինակներինն է: Բայց, մյուս կողմից, այստեղ մեղավոր է նաև Արևմուտքում Ռ. Թոմսոնի՝ Խորենացու թարգմանությունից հետո հայագիտության որոշ հարցերի շուրջ ստեղծված մթնոլորտը: Խորենացու և միջնադարյան այլ հայ հեղինակների՝ ուշ դարաշրջաններով վերաթվագրությունը, ապա և իրենց հայաստանյան ընդդիմախոսների դիտողությունների նկատմամբ արևմտյան հայագետների թերահավատ ու արհամարհական վերաբերմունքը Արևմուտքում այնպիսի տպավորություն է ստեղծում, թե ողջ հայաստանյան հայագիտությունը զբաղված է միայն հին հայ հեղինակների ժամանակագրությունը արհեստականորեն հետ տանելով, այսինքն՝ հայ գրավոր ավանդույթը, ապա և ողջ մշակույթը հնացնելով, որն այլ կերպ, քան անլուրջ նացիոնալիստական զբաղմունք, չի կարող կոչվել: Հատկանշական է, որ, օրինակ, այնպիսի մի լուրջ հրատարակության, ինչպիսին «Բրիտանիկա» հանրագիտարանն է, ինտերնետային տարբերակում Խորենացու վերաբերյալ կարճառոտ հոդվածի ամբողջ տեքստում խոսվում է այն մասին, որ լուրջ գիտնականները նրան թվագրում են հինգերորդ դարից ուշ, և միայն վերջում մի միտք կա այն մասին, որ Խորենացու երկում պահպանվել են որոշ տեղեկություններ հայերի հին հավատալիքների վերաբերյալ: Ահա այդ է, պարզվում է, Խորենացու վաստակը (եթե նույնիսկ կեղծ համարենք Խորենացու ավանդական թվագրությունը և կեղծիք՝ հայոց պատմության վերաբերյալ նրա բոլոր տեղեկությունները, ապա մնում են հին հայ բանահյուսության և այլ երկրների ու ժողովուրդների մասին նրա բերած տվյալները, որոնք լուրջ են ընդունվում այդ երկրների պատմությունն ու մշակույթն ուսումնասիրողների կողմից):

AHYAN S., Indo-European Mythical Theme on the Final Battle in the „History of the Armenians” by Movses Khorenaci (Journal of Indo-European Studies, 1998, N 3-4, p. 447-457).

ԱՀՅԱՆ Ս., Վերջին ճակատամարտի առասպելական թեման Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ (Հնդեվրոպական ուսումնասիրություններ հանդես, 1998, N 3-4, էջ 447-457):

AHYAN S., A new Mythical Theme in the Saga of Hervor and King Heidrekr and the Armenian „Epic of Sasun” (Journal of Indo-European Studies, 2000, N 3-4, p. 373-383).

ԱՀՅԱՆ Ս., Նոր առասպելաբանական թեմա Հերվորի ու Հեյդրեկր արքայի սաքում և հայկական «Մասունի էպոսը» (Հնդեվրոպական ուսումնասիրություններ հանդես, 2000, N 3-4, էջ 373-383):

Ֆրանսահայ գիտնական Ստեփան Ահյանի այս երկու հոդվածները, ինչպես և նախորդները, նվիրված են հայկական վիպական բանահյուսության մեջ բնիկ հնդեվրոպական ժառանգության բացահայտմանը: Ի հակադրություն իր առաջին աշխատությունների, որոնցում փորձ է արվում հայկական ավանդության մեջ ցուցադրելու Ժ. Դյումեզիլի դպրոցի հնդեվրոպական «եռաֆունկցիոնալ» իրողություններ, այս երկուսը հիմնված են համապատասխանաբար «Վիպասանքում» ու «Մասնա ծոերում» հնդեվրոպական այլ էպոսների հետ բացառիկ ընդհանրությունների բացահայտմանը: Հատկապես հետաքրքիր է առաջինը: 1976-ին Ս. Օ'Բրայենը սկանդինավյան, իռլանդական, հռոմեական և հնդկական հին վիպական տվյալների հիման վրա վերականգնել է «վերջին ճակատամարտի» առասպելական թեման: Սա հնդեվրոպական առասպելաբանության ամենաձավալուն վերակազմությունն է՝ բաղկացած տասը կետից: Ս.Ահյանի հոդվածում ցույց է տրվում, որ այդ թեման պարզորոշ կերպով պահպանվել է նաև հայ վիպական ավանդույթում՝ Երվանդ և Արտաշես արքաների մասին պատմող վեպում: Ընդ որում, հայկական նյութը նոր բացահայտումների և լրացումների հնարավորություն է տալիս: Հեղինակի աշխատանքի գնահատական կարող է ծառայել այն փաստը, որ Հեսիոդոսի «Թեոգոնիայի» հնդեվրոպական տարրերին նվիրված մի հոդված, նույն հանդեսի 2000 թ. համարներից մեկում, հենվում է նաև նրա վերլուծության արդյունքների վրա:

Ս. Ահյանն արդեն 1982-ին հրատարակեց մեզանում դեռևս արժանիորեն չգնահատված մի աշխատություն, որտեղ առաջին անգամ ժամանակակից գիտության մակարդակով ցույց էր տրվում հայոց ազգածին ավանդության՝ Հայկի և նրա հաջորդ նահապետների մասին պատմող գրույցների հնդեվրոպական ծագումը¹⁴: Հոդվածը հրատարակվեց ժամանակակից համեմատական առասպելագիտության հիմնադիր Ժ. Դյումեզիլի վերջաբանով: Սա էական նվաճում էր հայագիտության համար, որովհետև մինչ այդ արևմտյան գիտնականները (այդ թվում և հենց Դյումեզիլն ինքը), հայկական մշակույթի և հատկապես

¹⁴ *Les debuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes. Revue de l'histoire des religions. 1982, CIC-3, p. 359-371.*

առասպելաբանության տվյալները դիտում էին որպես միայն իրանականից փոխառյալ երևույթներ: Հետագայում Ս. Ահյանը փորձեց ցույց տալ նաև «Սասնա ծռերի» հնդեվրոպական արմատները¹⁵ (այդ խնդրին ավելի վաղ անդրադարձել էին Մ. Աբեղյանը, Ս. Պետրոսյանը, Ս. Հարությունյանը): Ավելի ուշ Ժ. Դյումեզիլն ինքն անդրադարձավ հայոց ազգածին ավանդությանը և «Սասնա ծռերին», բացահայտելով ու վերլուծելով դրանցում որոշ բնիկ հնդեվրոպական տարրեր¹⁶: Ընդ որում, նրա այս գործն ակնհայտորեն ոգեշնչված էր Ս. Ահյանի նախորդ աշխատություններով. ավելին, առաջին հայկյանների կերպարների դյումեզիլյան վերլուծությունն ուղղակիորեն կրկնում է Ահյանին:

Պետք է արժանին հատուցել ֆրանսահայ հեղինակին, որն Արևմուտքում միայնակ շարունակում է իր իսկ սկսած դժվարին գործը: Վերջին երկու հոդվածները՝ տպված այս ամենահեղինակավոր հանդեսում, նրա հանգուցյալ խմբագիր, նշանավոր հնդեվրոպագրան Է. Պոլոմեի քաջալերանքով և խորհրդատվությամբ, անկասկած, իրենց նպաստը կրերեն հայագիտության զարգացման գործին, կօգնեն նաև ի վերջո դադարեցնելու հայկական առասպելական և վիպական ավանդույթը, ապա և ողջ հին մշակույթը որպես միայն իրանականի մի ածանցյալ ներկայացնելու Արևմուտքում դեռևս շարունակվող մտայնությունը:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ա. Ե.

Բանասիրական գիտությունների դոկտոր

¹⁵ Տե՛ս, օրինակ, **Ահյան Ս.**, «Սասնա ծռեր» էպոսը և հնդեվրոպական երեք ֆունկցիաները (ՊԲՀ, 1985, N 1, էջ 32-46): Պետք է ասել, որ «Սասնա ծռերի» այս վերլուծությունները քննադատաբար է ընդունել Ժ. Դյումեզիլը (Dumezil G., *Myth et epos*, t. 1, III ed, Paris, 1986, p. 644):

¹⁶ **Dumezil G.**, *Le roman de jumeaux*, Paris, 1994, p. 121 seq., 133 seq.